ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

18.09.2024թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա. Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին

Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Գ.Քարհանյանը, Ա.Թումանյանը, Ռ.Մարգարյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բաղդասարյանը- մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Ա.Սահակյանը – մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ընթացիկ հարցեր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց Ֆրանսիայի Հանրապետության Շամոնի քաղաքում կայացած «Մտքերի գագաթնաժողով 2024» համաժողովին մասնակցության, կայացած քննարկումների և տարբեր ձևաչափերով հանդիպումների վերաբերյալ տեղեկատվություն՝ մասնավորապես սոցիալական նորարարությունների, տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի պահպանության, հատկապես՝ «կանաչ» էներգիայի զարգացման, վերականգնվող գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության և վերամշակման, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության և այլ թեմաներով: Գագաթնաժողովի հիմնադիր և կազմակերպիչ Թիերի Մալըրեի հետ քննարկվել է 2025 թվականին մտքերի գագաթնաժողովը Լոռու մարզում կազմակերպելու հնարավորությունը, որի անցկացումը Լոռու մարզում հնարավորություն կտա օտարերկրյա ներդրողների և միջազգային գործընկերների համար բացահայտելու մարզի ուժեղ կողմերն ու հնարավորությունները՝ ներգրավելով ներդրումներ և գործակցություն՝ տեղի արտադրողների հետ: Այցի շրջանակներում հանդիպումներ է կայացել նաև այլ պաշտոնատար անձանց և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանը ներկայացրեց ՉԺՀ Շանսի նահանգի Թայյուան քաղաքում «Էներգիա. նոր արտադրողական ուժ՝ հանուն մաքուր և գեղեցիկ աշխարհի» թեմայով ֆորումին մասնակցության վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ ներկայացվել է Էներգետիկայի նվաճումների և ցածր ածխածնային ճանապարհով էներգիայի ստացման վերաբերյալ հետազոտություններն ու արդյունքները, կազմակերպվել և անցկացվել են մի շարք հանդիպումներ և ձեռք բերվել պայմանավորվածություններ, այդ թվում Չինաստանի Յունչեն քաղաքի և Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի համագործակցությունը վերականգնելու հնարավորության հարցը:

3. Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց սուբվենցիոն և պետականմիջոցներով իրականացվող ծրագրերի, ապօրինաշինությունների, մարզում ընթացող շինաշխատանքների նկատմամբ իրականացվող մշտադիտարկման արդյունքների և արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանը ներկայացրեց ս/թ մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևների պատճառով աղետի գոտում գյուղատնտեսության ոլորտում բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման համար դիմումների ընդունման գործընթացը, հետևանքների վերացման նպատակով պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցների բաշխման և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին և Հ.Ավետիսյանին՝

1.1. Ամենօրյա ռեժիմով վերահսկել Աղետի գոտու հետ կապված աշխատանքների ընթացքը և 3-օրյա ժամկետում ամփոփել և ներկայացնել տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկություններ քաղաքացիների, բնակելի տների, օժանդակ շինությունների հետ կապված խնդիրների ու դրանց լուծումների վերաբերյալ:

1.2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին և Հ.Ավետիսյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել ամբողջական տեղեկատվություն վերականգնվող էներգետիկայի, տուրիզմի ոլորտի զարգացման, մարզում առկա աղբավայրերի տեղակայման և աղբի ծավալների վերաբերյալ՝ աղբի վերամշակման և այլ ներդրումային ծրագերի հնարավոր իրականացման նպատակով:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ. Մարգարյանին

2.1 Ապօրինի շինությունների, շինարարությունների կասեցման կամ խախտումների վերացման նպատակով շարունակել ամենօրյա խիստ վերահսկողություն սահմանել մարզի համայնքներում իրականացվող ծրագրերի ուղղությամբ:

2.2 Համայնքների ղեկավարների հետ կրկին անգամ քննարկել և 2-օրյա ժամկետում ներկայացնել Լոռու մարզ ՀՀ Վարչապետի այցի ընթացքում նախատեսված այցելության օբյեկտների ծրագրերի թարմացված, ամբողջական և վերջնական ցանկը:

2.3 Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող բոլոր ծրագրերի՝ շինարարական նախագծերին համապատասխան և բարձր որակով իրականացման, արձանագրված թերությունների վերացման, ժամկետների հստակ պահպանման նկատմամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ.Ասրյանին և Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Աղետի գոտում գյուղատնտեսության ոլորտում բնակչությանը արձանագրված և պատճառված վնասի փոխհատուցման համար դիմումների ընդունման գործընթացը ճիշտ և

օրինական կարգով ու ժամկետներում իրականացնելու նպատակով կազմակերպել ընտրանքային այցելություններ և ուսումնասիրություններ՝ որպեսզի բացառվեն չարաշահումները, անճշտությունները, բողոքները և անօրինական գործողությունների ռիսկերը:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ. Մարգարյանին՝

Սեղմ ժամկետում համատեղ ուսումնասիրել և ներկայացնել ամբողջական տեղեկատվություն Վանաձոր քաղաքի Մոսկովյան 62 շենքի բնակիչների բողոքի հիմնավորվածության, հողհատկացման օրինականության և համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություն խնդրի և նմանատիպ խնդիրների օրինական լուծման նպատակով:

X

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99